

ՔԱՆՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրձի կէս տարվան 6 բուրձի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисе, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք օ ն № 253.

Հ ի Մ Ն Ա Կ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսից Շահը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլը Պարսից Շահի ճանապարհորդութիւնը.
Պարսից Շահի մուտքը Թիֆլիս.
Նախարարի նախնորդների XIV ժողովը.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳՐՈՒՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ֆրանսիայից.

ՊԱՐՏՅԱՆ ԵՎ ԵՎԵՐ

Պարսից Շահը մեր քաղաքում է: Մեր երկրի իշխանութիւնը և Թիֆլիս քաղաքը մեծ պատուով և համարձակ ընդունեցին Շահեան և բարեկամ պետութեան գահաձայն, որը գնում է ճանապարհորդելու լուսաւորված աշխարհներում:

Ներկայ Շահի հայրը, Նասրէդդին-Շահը, առաջինը փորձեց գնալ Եւրոպա և տեղի ունեցող ծանօթանալ այն առաջադիմութիւնների հետ, որ արեւ են Եւրոպական ազգերը և պետութիւնները իրանց հասարակական և զինուորական կարգերի մէջ: Նասրէդդին-Շահը, վերադառնալով Եւրոպայից, սկսեց փոքր առ փոքր իրագործել բարեփոխութիւնների նախնական ծրագիրը, որը թէև զեռ լուրջ փոփոխութիւններ առաջ չէ բերել զարգանքի պետութեան մէջ, բայց յայտնի չափով հարթել է ճանապարհը աւելի ընդարձակ գործունեութեան համար: Պարսկաստանի ներկայ վիճակը Մուզաֆֆերէդդին Շահի ճանապարհորդութիւնը կունենայ անկասկած բարի հետևանքներ երկրի համար, մանաւանդ որ նա ինքը զեռ Եւրոպա ուր չը կոխած ցոյց է տուել իրան իբրև լուսաւորութեան բարեկամ և Եւրոպական կարգերին համակողմ:

Թէ համազօրեալ Նասրէդդին Շահը և թէ այժմեան Մուզաֆֆերէդդին Շահը առանձին հոգածութիւն են ցոյց տուել իրանց հպատակների վերաբերութեամբ խորութիւն չը գնելով կրօնների և ազ-

գութիւնների մէջ: Պարսկաստանի հը պատահները գիտէին, որ երկրի վիճակը պետք պատրաստ է լսելու նրանց բողոքները և պաշտպանելու նրանց զաւառական պաշտօնների թող ռուսաձ այս և այն անկարգութեան և չարաործութեան դէմ: Պարսկաստանում գտնվող սակաւաթիւ հայ ժողովուրդը մի քանի անգամ առիթներ ունեցաւ գիտելու Շահին և ամեն անգամ ստացաւ ուժեղ պաշտպանութիւն զահի կողմից:

Անկասկած խաղաղ կուլտուրական կեանք և հաստատ առաջադիմութիւն կարող է սկսվել Պարսկաստանում այն ժամանակ, երբ շահերի լուսաւոր տրամադրութիւնը կը վերածվի հաստատ վարչական և դատաստանական կարգերի և կը բացվին համապատասխան հիմնարկութիւններ կանոնաւոր շահի վրա գնելու երկրի վարական, տնտեսական և հասարակական կեանքը: Այդ բարեկարգութիւնները մոյցները համար հարկաւոր կը զան խելայի խորհրդատուներ և բազմաթիւ գործողներ: Մեր հաւատացած ենք, որ Շահը թէ իր հարեան և բարեկամ ուսուց պետութեան և թէ ուրիշների մօտ կը գտնէ բաւակարար համակրութիւն զէպի իր բարի գիտաւորութիւնները և կարող է ձեռնարկել անհրաժեշտ բարեփոխութիւններ, հաստատելու Եւրոպական կարգեր իր պետութեան մէջ, որ մի ժամանակ ներկայանում էր հին քաղաքակրթութեան օրրաններին մէջը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Օրվայ ամենախոշոր դէպքը Իրանի վեհապետ Մուզաֆֆեր-էդդին Շահի շահի գալուստն է: Երէկ կովկասի մայրաքաղաքը մեծ հանդեսով եւ արքայազնի պատիւներով ընդունեց Կիւրաների, Դարեհների գահի ժամանակակից

ներկայացուցչին, որ ճանապարհորդում է թէ ֆիզիկապէս կազդուրվելու և թէ լուսաւոր մարդկութեան գործերը մօտիկուց ուսումնասիրելու նպատակով: «Մշակը» արդէն մի քանի յօդուածներ է նուիրել այդ ճանապարհորդութեան և այդ առիթով յայտնել է այնպիսի ցանկութիւններ, որոնց կարող է ունենալ Պարսկաստանի անշահաւէր, անկեղծ բարեկամը: Համարեա մի և նոյն յոյսերն ու ակնկալութիւններն են տածում ուսուց մի քանի լրագիրներ, որոնք Շահի ճանապարհորդութեան առիթով տպագրեցին նրա կենսագրութիւնը: Մուզաֆֆեր-էդդին Շահի անձնական բարեմասնութիւնները, ինչպէս ասում է «С. Пет. Вѣд.» լրագիրը, երեւան եկան զեռ այն ժամանակ, երբ նա թագաժառանգ էր և Ատրպատականի ընդհանուր նահանգապետ:

Հէնց որ Շահազէ Մուզաֆֆերը դարձաւ Իրանի ամենաընդարձակ նահանգի ընդհանուր կառավարիչ, նա իսկույն յիշեց իր խելքը և եռանդոտ ուսուցիչ Միրզա-Նիզամին, որը զեռ մանկութեան ժամանակից ներշնչում էր իր արքայական աշակերտին սէր դէպի լուսաւորութիւն և գիտութիւն դէպի մերձաւորները: Միրզա-Նիզամի նորից մտածաւորութեան մէջ և մինչև այժմ իր տիրոջ հաւատարմի և ամենամօտիկ մարդն է, ինչպէս էր նրա մանկութեան և պատանեկութեան ժամանակ: Նա այժմ վարում է հասարակական աշխատանքների միջնորդի պաշտօնը և ամեն տեղ ուղեկցում է Շահին: Գահ բարձրանալով վաղապէս հանդեսանալով իր մէջ, երբ տրագիկալ մահով վախճանվեց նախորդ-էդդինը, ամբողջ Իրանի տեր և հրամանատար, «թագաւորների թագաւոր»: Մուզաֆֆեր-էդդինը ամենախիստ կերպով պատկեց իր հօր պայանդներին: Ամենքը Պարսկաստանում նոր միապետի այդ առաջին քայլերից կարծեցին, թէ նրա կառավարութիւնը կը լինի շատ խիստ, բայց սխալվեցին: Մուզաֆֆեր-էդդին Շահի սիրաւ անգիտութիւնների և շարութեան համար չէր ստեղծված: Դեռ թարիզի վաղ եղած ժամանակից Մուզաֆֆեր-էդդինը իր գործունեութեամբ ապացուցեց, թէ որքան մօտ են իր սրտին ժողովրդի կարիքները: Ատրպատականի սովի ժամանակ նա առաջինը օգնութեան հասաւ ամանջվող ազգաբնակչութեան

և Ռուսաստանում հացի անազնի պաշարներ գնելով, ամենաշնչին գնով բաժանել տուեց ժողովրդին, իսկ աղքատներին ձրի բաժանեց: Մուզաֆֆեր-էդդին Շահին շահը ուշադրութիւն է դարձում ժողովրդական ամենալայն կրթութեան վրա: Համոզված լինելով, որ ժողովրդի բազմն ու բարեկեցութիւնը թագնաւ են կրթութեան մէջ, Իրանի հրամանատարը ձգտում է, որ ոչ միայն ընդհանուր-կրթական, այլ և արհեստագիտական դպրոցների ցանցը տարեցտարի աւելի և աւելի լայնանար: Այդ նպատակով, Շահի անձնական նախաձեռնութեամբ, Պարսկաստանում հիմնվեց գրագիտութեան մի մեծ ընկերութիւն, որ հետևում է ոչ միայն կրթական, այլ և բարեգործական նպատակներին: Ընկերութեան դպրոցները բացվում են որբերի և չքաւորների համար: Նորին մեծութիւնը այս սուրբ գործին նուիրեց իր սեփական միջոցներից հարիւր հազար բուրձի և նրա օրինակին հետեւեցին Պարսկաստանի շատ բարձրաստիճան անձնաւորութիւններ:

Կովկասեան երկրի պաշտօնական լրագիր «Кавказ»-ը մի առաջնորդող յօդուածով ողջունում է Պարսկաստանի վեհապետի գալուստը և նոյնպէս մասնապէս է անում այն հանգամանքի վրա, որ Իրանի հին երկիրը կարող է բարիքներ սպասել իր թագաւորի ճանապարհորդութիւնից: Այժմեան ժամանակ, երբ աշխարհի տէրերը անտեսական-աւաւարական շահերն են, Պարսկաստանը իր աշխարհագրական դիրքի շնորհիւ ստացել է շատ կարեւոր նշանակութիւն, իբրև միջնորդ Եւրոպայի և Հնդկաստանի մէջ: Եւրոպական ազգերը արդէն սկսել են մեծամեծ ձեռնարկութիւններ, գլխաւորապէս հաղորդակցութեան ճանապարհները բարելոցելու համար:

Լինելով երբեմն Ասիայի հզօր թագաւորութիւններից մէկը, ենթարկված լինելով նուաճողների անհամար խմբերի զէմ անդադար կուլելու անհրաժեշտութեան, ճնշված ներքին խռովութիւններից, սարկացած ազէտ և ֆանատիկոս հողեւորականութեան ձեռքով, Պարսկաստանը, այնու ամենայնիւ, պահել է իր մէջ նորից վերածնվելու և ծաղկելու կարողութիւն: Նա առաջինը պահպանում է մտցնել երկրի մէջ արմատական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, մայիսի 13-ին

Պարիզում տեղի ունեցան քաղաքային ընտրութիւնները («s elections municipales») ամիսների պայքարից, պրօպագանդից, յուզմունքներից յետոյ: Դէմ առ դէմ էին կանգնած զբլխաւորապէս երկու կուսակցութիւններ՝ անպայման հանրապետականների կազմված բոլոր պաշտամբու և ծայրայեղ ազատամտութեան քաղաքային և նացիօնալիստների կազմված արքայալիստներից, բունապարտիստներից, կղերականներից, ինչպէս նաեւ չարիւտը հանրապետականներից (եթէ հաւատանք իրանց այդպէս անուանողներին): Կուրբ առք էր և վերջապէս նացիօնալիստների կատարեալ յաղթութեամբ: Այս դէպքն այնքան անսպասելի էր թէ յաղթողների և թէ յաղթվողների համար, որ կատարված փաստի առջ կրկու կողմն էլ զարմացած են մնացել ոմանք իրանց անակնկալ զարթութեան, միւսներն իրանց անաղոթութեան վրա:

Դեռ անցեալ կիրակի, մայիսի 6-ին կատարված ընտրութիւնները անսպասելի կերպով վերջացան նացիօնալիստների յաղթութեամբ, սակայն առաջիկայ կիրակին տեղի պիտի ունենային մնացած, քրայուցիչ ընտրութիւնները, որոնցով միայն կարելի էր որոշել կատարեալ յաղթանակն այս կամ այն կուսակցութեան: Այդ ամբողջ շարժվող ընթացքում Պարիզը արտակարգ յուզման վիճակի մէջ էր: Երկու կուսակցութիւններն էլ ծայրայեղ ջանքեր էին գործ դնում իրանց վերջնական յաղթանակին

ապահովելու համար: Հասարակական շինութիւնների պատերը ամբողջապէս ծածկված էին զոյնզոյն յայտարարութիւններով, հրաւերներով, թեկնածուների անուններով: Լրագիրներից դուրս կուրբ կատարվում էր նաեւ յայտարարութիւնների միջոցով, որոնցից շատերը կամ հերքումներ էին պարունակում հակառակ բանակի տարածած լուրերին, կամ յարձակումներ, մեղադրանքներ թեկնածուների անձնաւորութիւնների դէմ: Չանապան կօմիտէներ ամեն օր հրաւեր էին կարողում ընտրողներին զուլանալ, չը խարվել հակառակորդ բանակի խոստումներից, յայտարարութիւններից և ահագին թեով ամբողջ առաւօտից երկկող խրքված պատերի տակ կարդում էր թէ մէկը և թէ միւրը:

Ոչ մի կուսակցութիւն միւսին չէր խնայում, այդ ճշարիտ է, կուրբ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, բայց նացիօնալիստների գործածած զէնքը անպատիւ էր, և տարօրինակ է տեսնել մի քաղաքակրթված հասարակութեան մէջ կուսակցական կուրբ այդ եղանակը: Թողնե՛ք զեռ այն, որ նրանցից շատ շատերը զիսկաւորված հայրենասէրներ են, բայց ինչ, մօտենալով անձնական շահ հանող մութ անձնաւորութիւններ, որ նրանց ընթացքը երկգիմի է, նպատակները թագնված, մութ, դրա հետ միասին անհնարին էր առանց նողկանքի կարող զրանք հրապարակական հրաւերները, յայտարարութիւնները, բայարձակ զրպարտութիւններ, կեղծ մեկնութիւններ, ինսինուացիներ, ստեր, և այս բոլորը հարիւր հազար օրինակներով կայցրած ամբողջ Պարիզի պատերի վրա: Նացիօնալիստների պայքարին իբրև յենակէտ ծառայում էր այն հին երգը, թէ իրանց հակառակորդները, զուրկ ունենալով ներկայ կուսակարութիւնը, բանակի թշնամիներ են, որ նրանք վաճառված են հրէաներին, նրանք ծա-

խել են հայրենիքը անիշխանականների քաղաքներին են, որ իրանք և միայն իրանք են ճշմարիտ ֆրանսիացիներ և... անկեղծ հանրապետականներ: Այսպէս էր ասում կղերական միլիտարիստ Բօչֆօր իր «Intransigeant»-ում, Միլլըլուան և «Libre Parole»-ի խմբագիր անտիսեմիտ Դրուսոն և իրանց ամբողջ բանակը: Ծաւալի է ասել, որ արանց հետ միացան երկու ակնհասուր գրողներ՝ Ժիւլ-Լը-Մէսը և Ֆրանսուա Կօպէն, որն իր ծերութեան օրերում հողեւոր միլիթարութիւնը փնտրում է կղերի վերաբերել ծալքերում:

Հանրապետականներն ու սօցիալիստները, ընդհակառակն, աշխատում էին ցրել այդ ստերը, ցոյց տալ, որ նացիօնալիստները խաբում են ժողովրդին, որ նրանք անկեղծ չեն, նրանք միացած են արքայականների, զինուորականների և կղերի հետ հանրապետութիւնը կործանելու: Նրանք ապացուցեցին էլն բերում Դեբրուշի դաւադրութիւնն ու աքսորը, առաջադիմութեանը դատը, զինուորական մի քանի յայտնի չեֆերի բացարձակ ըմբոստութիւնը: Աշխատում էին ցոյց տալ այն վտանգը, որ կարող էր առաջ բերել նացիօնալիստ շարժումը իբրև նախապատրաստութիւն մի պատերազմի: Սակայն այդ բոլորն իզուր անցաւ, բէակցիան աւելի զօրեղ հանդիսացան և տարեւ իր համար անսպասելի և հակառակորդների համար սարսափելի յաղթանակ: Պարիզը այսօր, մայիսի 13-ին, նեովեց նացիօնալիստների զիբրը և անտիսեմիտները, արքայականները և այլ պահպանողական տարերը գնացին գրաւելու նախկին հանրապետական և սօցիալիստ խորհրդականների ամբարանները: Կարելի է կարծել, որ այս օրերում Պարիզը վերստին անց է կացնում բուրձանիվով ճգնաժամը, պակասում է միայն սեւ ձիով գնեւորը ամեն ինչ կատարեալ դարձնելու համար: Իրա-

ւունք ունէր «Temps» թերթը, երբ անցեալ օրը գրում էր (առաջին՝ մայիսի 6-ի ընտրութիւնից յետոյ), թէ «Պարիզը մի կապրիզի չընորհիւ մենք տաններու տարով ջահիլացանք» —1888 թւի յունվարի 27-ին էր, երբ նոյն Պարիզը մի արտակարգ էնտուզիզմով էր ջուէն տուեց զենեւալ Բուլանժէին, որին վիճակված էր սակայն այնքան տիրու վախճան: Ընչդ այդ օրերի պատկերն է ներկայանում այս օրերում Ֆրանսիայի մայրաքաղաքը: Հէնց այս րօպէին, երբ գրում եմ այս սողերը, զեռ լսվում են փողոցներում նացիօնալիստների յաղթական արապակները: Նրանք խրքելով չըլում են փողոցներում հակառակ կամ համակրական ցոյցեր անելով այս կամ այն խմբագրատան առաջ: Այս երկկող հեռաքրքրական էր մանաւանդ Մօնմարտը փողոցը: Այստեղ մի և նոյն տան զանազան յարկերում են գնեւողված մի քանի իրար հակառակ թերթերի խմբագրութիւնները, ինչպէս «L'Aurore», «L'Intransigeant», «Le Radical», մի ջիւ հեռու օրթւսի «La Petite Republique»-ն է: Նացիօնալիստ խմբերը յաղթանակով ողբւորված բնականապէս այստեղ ուղղեցին իրանց ընթացքը քաղաքի բոլոր մայրերից: Փողոցում շարժվելու տեղ չը կայ «L'Intransigeant»-ի լուսամուտից հեռահեռ ցոյց են տալիս թափանցիկ կտաւի վրա ընարված նացիօնալիստների յայտնի անունները, հազարաւոր ամբողջ ծափահարում է աղմուկով: Ահա կտաւի վրա երեւաց խոշոր տառերով «vive l'armée!» ներքեւում ողբերգութիւնը նստաւ իր գագաթնալիստին, հազարաւոր կողորդներ ճչում են vive l'armée, ահա եւ Լուրիսի պատմական դարձած գլխարկը՝ մի կողմից ծոված մի արքայականի յայտի հարուածից, ամբողջ սուրում է, ճչում է, հոհում, ահա եւ Դեբրուշու կարրիկատուրան՝ «Mort aux juifs», լսվում է սեփեւ բե-

ընթացումը, որոնց նպատակը կը լինի ժողովրդի բարոյականութեան զարգացումը և պատկառելի լինելու յայնչապէս ազատական իրաւունքները, որոնք իրանի լաւագոյնը եւ ամենից շատ կրթված քաղաքացիներն է զբաղեցնում, չը պէտք է մոռանալ, սակայն, որ այդ յայնչապէս կարող են իրականացնել ժամանակակի մի շատ երկար շրջանի միջոցով, եթէ լուրջ, սիրտեմտաբերական աշխատանք եւ արժանաւորութեան ընթացքները կրկին ներդրուին:

Այն, խաղաղ աշխատութեան եւ կուլտուրական շինարարութեան ոլորտն այժմ տիրել է ազգերի եւ աշխարհների միա ու պահանջում է գործ եւ գործ: Պարսկաստանը պատմութեան շատ երկար շրջանում նուազուկու, տիրողը հընչակ էր վարչութիւնը: Արեւմտեանները, Սասանեանները, մահմեդական այն բազմաթիւ դինաստիաները, որոնք զարմանալի արագութեամբ փոփոխուած էին Պարսկաստանում, իրանացի անունները գործնական կատարելութեան մէջ երկար է եւ արեւան միջոցով: Բայց այդ ժամանակները անցել են անդառնալի կերպով: Նոյն իսկ մի 100—105 տարի առաջ թիֆլիսը Ղաջարեան ներկայ դինաստիայի հիմնադիր Աղա-Մահմէդ խանի ձեռքով աւերակներ կոտորուած, բայց այսօր նոյն թիֆլիսը բարեկամակալ զգացմունքներով եւ վերին աստիճանի սիրով կերպով ընդունում է իր մէջ այդ նընչապէս նուազող ժամանակներ, որն այլ եւս պատերազմ չէ բերում մեր երկիրը, այլ բարի գրայնութեան, ազգերի կրթարարութեան զարգացումը: Իրանը վաղուց է թողել վառօրի ձեռքով պատմութեան գրկը: Այժմ շատ ցանկալի է, որ նա նոր էլ բաց անէ պատմութեան մէջ եւ այդ էջը գործը լինի քաղաքակրթութեան եւ լուսաւորութեան համար քրտինք թափող ժողովուրդը, որ ամեն տեղ հրաշքներ է գործել, երբ զինվել է ճշմարիտ կրթութեամբ եւ հանրամարդկային զարգացումով: Արեւելքը սկսել է վերածնվել: Նա վաղուց սպասում է, որ Իրանը իր արեւական ընդունակ, ազնիւ ազգաբնակչութեամբ վերածնութեան եւ առաջադիմութեան գլուխն անցնէ:

ՊԱՐՍԻՃ ԾԱՀԻ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ

Մենք հազարէլ էինք տեղեկութիւններ Ծահի ճանապարհորդութեան մասին: Զուգարայի մինչեւ երեւան:

Մայիսի 11-ին, երեկոյան 6 ժամին, նորին մեծութիւն Ծահը ժամանեց Երեւան: Քաղաքի սահմանի վրա Ծահին դիմաորոնց պոլիցիաները, Զօրքերը եւ զպրոցների աշակերտները կանգնած էին Ծահի անցնելու ճանապարհի վրա: Պատուաւոր պահակախումբը Նոր-Բայազետեան գնդից էր: Պատուաւոր պահակախումբի մասնաբաժինը, հեռագրատ կեանքում են մինիստրների անուններ՝ Միլլերան, Գալիֆէ, «Démision! Démision!» կանչում են ամենուրեք: Մէջ ընդ մէջ տակտով, նոյն իսկ մի տեսակ կանչակով կրկնում են «conspuez l'Aurore», «conspuez l'Aurore» (թեքեցէք «L'Aurore»-ին) շարունակ, անվերջ:

Երեւում է, որ կառավարութիւնը դեղքերը նախատեսելով արտակարգ միջոցներ է ձեռք առել կարգը պահպանելու համար: Բազմաթիւ ոստիկաններ կանգնեցնուցեց աշխատում են ցրվել ամբողջ առանց ընդհարումների պատճառով, առանց խտուրթիւնների, տեղ-տեղ փողոցների մուտքը շրջափակել է, անդուդարձը դադարեց է: Այսպէս, փակված է այն փողոցի մուտքը, որ ամառում է դէպի «Libre Parole»-ի խմբագրատունը: Այս ուսանող աշակերտ բազմութեան մէջ մենք մի քանի օտարականներ ենք, արեւելեան տիպը երբեմն այս ու այն չօվինիստին սխալմունքում է, ականջներին տակ լսում ենք sal juif, ստորն անհետանում է վարկենապէս, ոստիկանների հետ սէք չունեն, շատ շուտ են փախչում: Անա մի 10—13 տարեկան կալրոջ ինչ որ անախորժ բան է ասում օտարականների հասցէին, լաւ չենք լսում, բայց l'etranger բառը, որ մեր ականջին հասնում է շատ որոշ կերպով, հասկանում է մրնացածը: չնչոր զարգացող է եւ ատելութեամբ լցված, ինչու... Անա մի ուրիշ կալրոջ, սա արդէն շատ լուրջ դէմք ունի եւ իրան հասուն քաղաքացի է համարում: զիտեք ինչ է մերթմընում, որ մենք լսենք «enfin on est chez soi» (վերջապէս մարդ իր տանն է), ուզում է, ասել միտմտեան օտարների ձեռքից ստուգելու, անա թէ ինչ կը նշանակէ լրագրական սուտը եւ թէ ինչպէս են վարակուած հոգիները:

Եթէ այս քաղաքային ընտրութիւններով Պարսից ինքն իրան բարձրակարգ նախօժանիստ յայտարարեց, նոյնը չէ կարելի ասել սակայն

ճակն թեւի վրա կանգնած էին զինուորական վարչութեան պատկանող անձինք, իսկ նրանց դէմ առ դէմ քաղաքացիական պաշտօնեաները՝ խաների, բէգերի եւ մահմեդական հոգեւորականութեան հետ միասին: Չը նայելով որ սարսափելի անձրեւ էր պալին՝ փողոցները լիքն էին ժողովրդով: Ի պատիւ Ծահի կառուցված էր յաղթական կամար: Նորին մեծութիւնը կառքով, զինեւրայ-աղբաւանա Սրբնիէյի, ֆիլիէլ-աղբաւան Ժիլիօլիէի, փոս-գնդապետ Բէլ-գարդի եւ սիրապի հետ, զօրքերի եւ հասարակութեան աւարտաշարակներով ուղեկցութեամբ՝ զնաց նահանգագետի տունը, ուր Ծահի համար պատրաստված էր չքիլ բնակարան: Քաղաքագլուխ Իսահակ Մէլիք-Աղամարեան ժառանգեց աղ ու հաց: Իրանից յետոյ, պատուաւոր պահակախումբը առջեւից անցնելով, նորին մեծութիւն Ծահը բարեկեց զինուորներին եւ հեռացաւ իր սենեակները: Երեկոյան հրաշալի լուսավորութիւն կար: Բոլոր տները զարդարված էին զրօշակներով, երեկոյան ձիւղ 8 ժամին Ծահը մտնեց: Բայց պատուահին: Հէնց որ նա երեւցաւ պատուհանի մօտ, ուրայի աղազակներ սկսեցին Առաւօտան 9 ժամին Երեւանի նահանգագետի մօտ պատրաստված էր ճաշ 60 անձանց համար: Ցցերեկվայ ժամը 4-ին, նորին մեծութիւն պարսից Ծահը հանդիսաւոր ունկնդրութեան կարգով ընդունեց Նորին վեհափառութիւն ամենայն հայոց կաթողիկոս Սիլուսի: Ի-ին: Բունդորտութիւնից յետոյ՝ Նորին վեհափառութիւնը այցելեց Պարսկաստանի մեծ վիզիր Սադրազամին: Երբ կաթողիկոսը գնաց առաջնորդարան՝ Սադրազամը՝ ֆիլիզի-աղբաւան Ժիլիօլիէի, փոս-գնդապետ Բելգարդի եւ պետական խորհրդանիստ Կոնստանտին հետ, այցելեց Կաթողիկոսին: Ցերեկվայ 4 ժամից յետոյ, Ծահի մօտ ընդունելութիւն չը կար: Սաստիկ կարկուտի պատճառով, ժողովրդական զրօշակը այլ եւս չը կայացաւ: Սարգսրի այգում:

Մայիսի 13-ին Նորին մեծութիւն Ծահը ժամանեց Դիլիջան, երեկոյան 7 1/2 ժամին: Ընդունելով արդահանեան գնդի պատուաւոր պահակախումբը զրօշակով, Ծահը գնաց տեղական պատուհանագրաստան գլխաւոր Բաքրաձէի տունը, ուր պատրաստված էր նորին մեծութեան համար բնակարան: Բաքրաձէի մասնաբաժնակ աղջիկը մատուցեց Ծահին թարմ ծաղիկներից կաթված մի փունջ: Նորին մեծութիւնը չնորձեց աղջկան մի թանգագին մատանի երեկոյան Դիլիջանը լուսավորված էր:

Մայիսի 14-ին, երեկոյան 8 ժամին, Ծահը ժամանեց Աղստաֆա, ուր դիմաորոնց նրան թիֆլիսից ընդ ընդ առաջ գնացած կառավարչապետի պաշտօնակատար զինեւրայ-լէյտնանտ Մերեզէ: Դիլիզանեաների մասին, այնտեղից կեանք հեռագրորենք մեծ մասամբ հաստատում են հանրապետականների յաղթութիւնները: այս հանգամանքը, այնու ամենայնիւ, չէ կարող ոչնչացնել Պարսից տեղի ունեցած փաստի առաջնակարգ նշանակութիւնը: վաղուց հաստատված ճշմարտութիւն է, որ միտմտեան մարտաքաղաքը քաշում է իր ետեւից ամբողջ երկիրը եւ հանրապետական կարգի տեսակէտից անվտանգ չէ միտմտեանը սրտում մի հակահանրապետական քաղաքային խորհուրդ՝ ունենալ եւ այն ներկայ փախուկ պայմաններում, երբ այնքան հաւանական է համարվում մի օտար-État-է: Անա թէ ինչու աղտամալից թերթերը իրանց կառավարչա պարտութիւնը խտուրթներով մի եւ նոյն ժամանակ չեն թագնում իրանց մտահոգութիւնը, իրանց զայրոյթը ընտրողների կուրուքեան համար, նրանք լուսանք են թափում մանաւանդ իրանց կուսակիցների գլխին, որոնք անմիջապէս իրանց կուսակցութեան կուսակցութեան, թուրքութեան արդիւնք են համարում կրած պարտութիւնը:

Միջերկրական չէ նաեւ Ֆրանսիական ներկայ միտմտութեան կայսրութիւնը՝ լարձա-կուսակցութեան կողմից, նա մեղաւոր է ամենի առաջ: Ցեւադէմ թերթերը նրա մէջ տեսնում են իրանց բնական թշուարներ, որովհետեւ քանի այս միտմտութիւնը կանգուն է, նրանց չօվինիստ կամ միապետական ծրարները չեն կարող իրագործվել: անա թէ ինչու անագին ջանքեր են գործ դնում նախ՝ այս միտմտութիւնը ստապակել եւ բոլոր նշաններից երեւում է, որ Պարսից նոր քաղաքային խորհուրդի ամենակական հոգսը սկսել լինի կառավարութիւնը փոխել, թէ աչողի: Աղստաֆա թերթերը նոյնպէս չեն ինայում միտմտութիւնը: Le ministère de la defence republicaine-ը նրանց համար դարձել է Le ministère de la trahison (հանրապետութեան պաշտպան

ջանում) ուր Ծահը զինեւրայ-գեղեցիկ լուսավորութիւն կար: Կեանքի վրա ամեն տեղ խաղաղների էին վառվում: Դիլիջանից դուրս գալու ժամանակ, Նորին մեծութիւն Ծահը շնորհաւորեց զօրքերին Նոյա կայսերական Մեծութիւնների արագան թագադրութեան առթիւ, որին պատասխան եղաւ ոչնչորված անընդհատ աւարտ-«ի» աղաղակը: Դիլիջանից դէպի Աղստաֆա տանող կէս ճանապարհի վրա, Քարվանսարս գիւղում երկու չքիլ զրահներ էին խփված, մէկը նորին մեծութիւն Ծահի համար, իսկ միւսը՝ նահանգագետի համար: Հետեւեալ օրը, մայիսի 15-ին, առաւօտան 5 ժամ 30 րո-էին Ծահի գնացքը ճանապարհ ընկաւ թիֆլիս:

ՊԱՐՍԻՃ ԾԱՀԻ ՄՈՒՏՏՔԻ ԹԻՖԼԻՍ

Երէկ, երկուշաբթի, մայիսի 15-ին, պարսից Ծահ Մուշաֆֆէրէդդին մուտք գործեց թիֆլիս: Քաղաքը, որն անա մի քանի օր է ինչ պատրաստվում է Ծահի ընդունելութեան, վաղ առաւօտից ստացել էր հանդիսաւոր կերպարանք: Քաղաքը զարդարված էր զրօշակներով: Երկաթուղուց մինչեւ պալատը երեք տեղ կանգնեցրած էին զեղեցիկ յնված եւ պծեղված յաղթական կամարներ: Կանաչազարդ շղթաներ, բազմաթիւ զրօշակներ, գոյնզգոյն զօրքեր դարձրել էին ճանապարհը երկաթուղուց մինչեւ պալատը հրապուրիչ: ժողովրդի մեծ բազմութիւն խոնրվել էր երկաթուղու կայարանի եւ Գօլօլիսիկի պրօսպեկտի վրա:

Ծահը ժամանեց երկաթուղու գնացքով առաւօտան ժամի 10-ին, Սադրազամի, իր շքեղամբի, կովկասեան կառավարչապետ օգնական զինեւրայ-լէյտնանտ Մերեզէի, թիֆլիսի նահանգապետ Սիլիչիի եւ ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաների հետ: Երկաթուղու կայարանում Ծահին դիմաորոնցին թիֆլիսի փոխնահանգապետ Կ. Ստեֆանօսիչի, թիֆլիսի աղնակառութեան նահանգապետ Կ. Բաւառապետ պարագլուխները, քաղաքագլուխ Գ. Վանազուրով, վարչութեան անդամներ իլխան Ա. Արզումանիսի, Մ. Շեստակով, իլխան Աջրէզով եւ ճայաւորներ, թիֆլիսի ոստիկանապետը, թիֆլիսում ապրող պարսկահայապետները ներկայացուցեցին եւ ուրիշները: Քաղաքագլուխը խօսեց իր համառօտ ճառ, որը թարգմանուցեց պարսկերէն: Ճառը գրված թղթի վրայ, մի առանձին ծրարով մատուցվեց Ծահին: Ծահը վերցրեց իրան մատուցված արուհայից մի կընտոր հաց եւ յայտնեց շնորհակալութիւն կայարանի առաջ կանգնած էին համբարները իրանց զրօշակներով եւ պարսկահայապետները զուսնայտի: Երբ Ծահը դուրս եկաւ կայարանից, թիֆլիսից ողջունեց Ծահի մուտքը քաղաք:

միտմտութիւնը՝ դաւաճան միտմտութիւն), այդ թերթերը գտնում են, որ կառավարութիւնը հանրապետութեան պաշտպանի քաղաքի պարտք ստանձնելով հանդերձ՝ իր թուրքութեամբ, իր վախկոտութեամբ, կիսատ միջոցներով մի տեսակ դաւաճան հանդիսացաւ, որ նա չը ջնջել կղերակառութեան ոգին, որ ծանրանում է ամբողջ միտմտութիւնը: իրանց նրանց ձեռքից կրթական հաստատութիւնները, նրանց գոչքերը, հարստութիւնը, որ անչափ մեծ է, թէ նա թայ գտնուց նաեւ դէպի զինեւրայները, դէպի հակահանրապետական սարքերը եւ անա թէ ինչու, հաւատացնում են նրանք, բեակիօսեր տարբեր վերստին դուրս բարձրադիրքի եւ վաղից Բուսան մտքերի այս փոթորակի ծովը վրայով պիտի վարէ իր միտմտութեան նաւը: կը հասնի անախորժ պարսից, այդ կը պարզվի պարսկալեւոսի առաջին կայսր իստաշլահում, որ սկսվում է մայիսի 22-ից:

Պարսից քաղաքական տրամադրութեան այս փոփոխութեան պատճառը զբաղեցնում է համարեա ամենքին: Կապրիզ է, առում «Temps» եւ խորհուրդ է ապլես սաւանարիւն լինել եւ առանձին կարեւորութիւն չը սալ: նա օրինակ է բերում բուսանից վախճանը Սա-կայն եթէ անհաստի կապրիզը չարիք է նկատվում արամաբանական հիմունքներից, հագրութիւնը կարելի լինի սակը հասարակական կապրիզների մասին: Դրէյֆուսի դատի վերաբերութիւնը համբերող, արանից մի քանի անախորժ հանրապետութեան արձանի բացման հանդէպին այնպիսի անտուր որեւորութիւն արտայայտող Պարսից չէր կարող ստակ կապրիզով նայեցնուլիստ դաւանալ, որը եթէ ոչ ամբողջապէս, դէթ մեծ մասամբ հակահանրապետական սարքերի կուսակցութիւն է ներկայանում այսօր: Նախ ամուրախալ է, որ նայեցնալիստները

ճանապարհի գծով կանգնած էին զօրքեր եւ կանաչան զպրոցների աշակերտական խմբեր: Ծահի ուղեւորութեան միջոցին մինչեւ պալատը յաղում էին ամեն տեղ ողջոյնի աղաղակներ: Պայապի առաջ կանգնած էր պատուաւոր պահակախումբը:

Ժամի 11-ին Ծահը հասաւ պալատ: Այդտեղ ժողովված էին թիֆլիսի պաշտօնական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ, թիֆլիս քաղաքի ճայնաւորներ, օտար պետութիւնների հիւպատոսներ եւ ուրիշ անձինք:

Ծահն ընդունելով ժողովականների ողջոյնը, յայտնեց իր շնորհակալութիւնը եւ հարցրեց նրանց առողջութեան մասին: Պարսից հոգեւորականութեան շէյխ-ուլ-իսլամը կարգաւ մի համառօտ ուղերձ, ողջունելով Ծահի գլուխաւոր իտալի կարճ կերպով օտարազգի հիւպատոսների հետ, Ծահն անցաւ իրան համար պատրաստված սենեակները: Պայապի մեծ սենեակում պատրաստված էր պատուաւոր ճանապարհորդների համար նախաճաշ:

Երեկոյան քաղաքում տեղի ունեցաւ լուսավորութիւն: Մասնաւոր ճոխ եւ զեղեցիկ էր լուսավորութիւնը պալատի առաջ:

ՆԱԻԹԱՐԴԻՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ XIV ԺՈՂՈՎԸ (Նամակ Բագուցից)

Մայիսի 5-ին, երեկոյան 8 1/2 ժամին, ձմեռային կուրի զանդիճում տեղի ունեցաւ նաւթարդիւնաբերողների XIV ժողովի առաջին նիստը, նախագահութեամբ Կոլկասի լեւոնային վարչութեան նախագահ Մ. Ծոտակի:

Ներկայ էին 62 նաւթարդիւնաբերողներ եւ տասնեակ հիւրեր: Պատուաւոր հիւրերի առաջին տեղը բռնում էր նահանգապետ Օղինցի, որը ներկայացաւ ժողովին բարձրագոյն յանձնարարութեամբ: Ըստ սովորականին, ամեն տարի, երբ ժողովը փակվում էր, ի պատիւ նախագահի արվում էր ընդհանուր ճաշ, այդ ճաշը նստում էր մինչեւ երեք հազար րուբլի: Անցեալ տարի նորին նախագահ Մ. Ծոտակ հրամարդեց այդ պատուից եւ ինդրեց ճաշի համար ծախսվելի գումարը յառկայեցի բարեգործական նպատակի: Նաւթարդիւնաբերողները 3090 ր. նուրիցին թագուհի-կայսրուհի Մարիա Տէօթօրօվնայի հովանաւորութեան տակ գտնվող Էկարմիր Այախ ընկառութեան յօգուտ սովորեցներ: Այդ նուիրաւորութեան համար անա, նորին Մեծութիւն թագուհի Մարիա Տէօթօրօվնայի կարգադրութեան համաձայն, նահանգապետ Օղինցի յայտնեց ժողովին Նորին Մեծութեան շնորհակալութիւնը այդ նուիրաւորութեան համար:

Ապա ժողովը բացված յայտարարվուց յետոյ, տեղի ունեցաւ վերահանդ մասնաժողովի

գործեցին արտակարգ եռանդով եւ կազմակերպված պայքար մղեցին: Նրանք կարողացան չահագործել եւ այն չարաչար կերպով Դրէյֆուսի դատի վերաբերութիւնից յետոյ տեղի ունեցած բոլոր մար ու խոչոր դէպքերը, նրանք կարողացան շատերի մէջ հաւատը թուրցնել դէպի ներկայ կառավարութիւնը, կարողացան ստեղծել մարդ զօգորութիւններ, մարդ զաներ եւ ընդհանուր խանդուղից կարողայան լաւ օգտվել: Բայց ամենից աւելի նրանք շահագործեցին այն տարածված լուրը, թէ կառավարութիւնը տրամադիր է վերստին յարուցանել Դրէյֆուսի արտահայտի դատը յուսարահուրից յետոյ, աւելի եւս կառավարչից ամենքին Դրէյֆուսի պաշտպաններից մէկի ժողով Բէյնախի մի հրապարակական ճառը, ուր նա այն միտքը պաշտպանեց, թէ դատը պիտի վերսկսելու Դիւրաբ էր աւելի անխտնեմ գտնվել ճանապարհական ներկայ տրամադրութեան ժամանակ: Ինչքան է արդար լինի Դրէյֆուս, ինչքան է յանցաւոր նրա մարտիրոսութեան պատճառ դարձած զենեւրայ Մերսիէ եւ ընկ, իրողութիւնը է սակայն, որ այսօր միտմտեան իսպառ ճանձրացած, զղված է այդ դատից եւ ուրախ է, որ մի կերպով վերջ առաւ թաղից:

Այս պատճառից դուրս կարծում են եւ դեր է խաղում նաեւ Ֆրանսիացու ընտրութեան մի յատուկ գիծը, այս ժողովուրդը կարեւոր սիրում է աւելի խոչոր ցնցումներ, մեծ փոթորիկներ, որից տիեզերքը զղրդալ: նա շատ անգամ աչքերը փակում է մանր կարիքի մանր անարդարութիւնների առաջ, կարծես դիտմամբ թողնում է, որ սուտը կուսակալի ստի վրա, կեղծիքը կեղծիք վրա, որպէս զի յետոյ միտմտեանից, հակալի մի հզօր շարժումով ցրվի այդ բոլորը, եւ դարերի աւերակների վրա բարձրացնէ նոր շէնքեր: Ա. Անարանեան

արտաբան ժողովում Պոպովիչ յայտնեց, թէ այժմեան Աւստրիայի պետական հիմնական գաղափարը Դունայի ջրաբաշխական շրջանում ապրող փոքրիկ ազգութիւնների ֆեդերացիայի մէջ է, որոնք կազմում են մի պետութիւն՝ փոխադարձաբար միմեանց զոյգութիւնն ապահովելու համար:

ՊՐԵՏՕՐԻԱ: Այն բոլոր անձինք, որոնք մեղադրվում էին Բեզլիի ձուլարանը պայթեցնելու համար, արդարացրած են Իտալիաներու դրոշմը և արձակված են բանտից:

ԲՈՒԳԱ-ՊԵՅՏ: Աւստրիական պատգամաւորութիւն Արտաքին գործերի մինիստրութեան ընդգծտի առիթով ծագած վիճարանութիւնների ժամանակ Մունտէր ասում է, թէ ներկայ ցաւայի դրութեան մէջ միակ լուսաւոր կէտը արտաքին յարաբերութիւնների լուսութիւնը եւ երեքպետեան դաշնակցութեան ամբողջութիւնն է:

Չեխ Պալակ քննադատում է Գոյուխովիու գաղափարներով իրարանան թերակղզու վերաբերմամբ եւ ապացուցանում է, թէ Աւստրիան աջակց չունի բարեկամներ: Կայսրի այցելութիւնը Բեզլիի ոգտակար էր միայն Գերմանիայի համար. նա կը թարմացներ նրա պրեստիժը: Չեխ Կաֆուան ասում է, թէ կայսրի ուղեւորութիւնը դարձրեց Բեզլիի եւրոպական քաղաքականութեան կենտրոն: Աւստրո-Ռուսական վախճանու տեղիք չունի Ռուսաստանից: Ճառարանը քննադատում է Աւստրո-Ռուսական քաղաքականութիւնը Սերբիայի եւ Չեխոսլովակի վերաբերմամբ եւ ցանկութիւն է յայտնում, որ Աւստրիան միանայ Ռուսաստանի հետ: Չեխ Ստրասկի ապացուցանում է, թէ Ֆրանց-Յոսեֆի կայսրի այցելութեանը նախապայման ձեւ էին տուել Բեզլիում Աւստրիական դիվոյմատիան պէտք է ժամանակին այդ բանի առաջն առնէր: Աւստրո-Ռուսական պայթեցութիւնը Կ. Պոլսում բողոքովն ոչնչացել է, որին ապացուց է Գիւլի գործը:

15 մայիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յարակոչ-Սելուսի նոցա Կայսերական Մեծութիւնները ներկայ էին սպասարարին Մեծ պալատի եկեղեցում:

ԱՍՏՐԱԿԱՆ: Տեղեկութիւններ են ստացված Ղլարում պատահած սպիտի մասին Թերեքը, պատռելով արիւրը, հեղեղել է քաղաքի կէտը եւ չըջկաները: Միակ հաղորդակցութիւնը Աստրախանի հետ է, որտեղից 15,000 պուդ ալիւր է ուղարկված:

ՏԱԻԲՕՇ: Բռէրները հրաժարվեցին վաւ զեւր պաշտպանելուց: Զորքի գլխաւորները հաւաքվեցին խորհրդի, որպէս զի վճեն այն հարցը, թէ նպատակայարմար է արգեօք շարունակել պատերազմը:

Կ. ՊՈԼԻՍ: Մինիստրների արտակարգ ժողովում քննարկվում էր այն իրադէի կատարումը, որ վերաբերում է հայոց պատրիարքարանի պահանջին:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻ
(ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 գնացքը:	№ 3 գնացքը:
Բաղուից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 ժ 53 »
Թիֆլիսից դուրս է գալիս » 9 » 32 »	կր. 5 » 34 »
Բաթում է հասնում	կր. 6 » 34 »
կր. 9 » 1 »	առ. 7 » 14 »
№ 6 գնացքը:	№ 4 գնացքը:
Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր.	կր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում	կր. 7 » 15 »
Թիֆլիսից դուրս է գալիս » 7 » 18 »	» 10 » 05 »
Բազու է հասնում	ցեր. 12 » 10 »
» 5 » 16 »	

Կենտրոնական գրասենյակում ծախվում են
ԼԵՒՈՆ ՍԱՐԿԱՍԵԱՆՑԻ
ԱՅՑ ԹԻՐԻԲԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ . . . 60 կ.
ԺՈՂՈՎԴԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ
ՄԵԶԱՆՈՒՄ 20 կ.

ԲԻԹԵԿ Մ. ՄՈՒՐԱԿԵԱՆ

(Մտկայից)
Նախկին տարիներ նման ընդունում է հիւանդներին հանգստի ջրերում
(ՊԵՆՏԻԳՕՐՍԿՈՒՄ)
6—10

ՊԱՍՏԱՌԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ լու ծանօթ մի երեսասարգ, որ հետո է հայերէնի եւ զիտէ ֆրանսերէնի, գերմաներէնի եւ յունարէն լեզուները, պատրաստում է այդ աստիակներից վերաքննութիւն ունեցողներին եւ ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ հայ ընտանիքներում Պայճանների մանրամասնութիւններին տեղեկանալու համար զիմի՝ Большая Ванкская, домъ № 1, Макутынцу. 5—5

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ
„Մ Ի Զ Ն Ո Ր Գ“
(Посредникъ)

Գ. Ի. ԵՆԿԻՄՕՎԻՉԻ
Պուչկինեան պատճ, Թամաշիլի քարվանսարայի հանդէպ:
Կատարում է զանազան յանձնարարութիւններ անչարժ կաշքեր ծախելու եւ գրաւ դնելու: Պահանջվում է առաջին եւ երկրորդ գրաւակաւնով փող: Մանրամասնութիւնների համար ինչպէս զիմի գրասենակը: № 3. 0—20

ՅԵՆՕՄԵՆ
Ե. ԼԵՒՈ.
Մազերը անցնելու միջոց
Գ Է Պ Օ
Բալլէ եւ ընկի մօտ.

Ունենալով ամառն ազատ ժամանակ
ՍԱՐԳԻՍ Ո. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ
(Дворцовая ул. д. Сараджева, номера «Европа» кв. № 9). Աւանդում է հիմնաւորապէս ՀՈՒՆՔԱՆՈՒԹԵԱՆ Եւ ՈՒՆԻՅԵՐԵԱՆ ԹՈՒՐԿՆԵՐԻՆԵՐԸ լրակատար դասընթացքը: Տեսնել կարելի է երեկոները ժամը 5-ից մինչեւ 7-ը: 6—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թղթատուութեամբ: Մեծ արկղիկը 5 րոպէի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ:

ՊԻՓԼԻՑԻՆԻՆ
ՆՈՐ ՄԻՀՈՑ
մազերը անցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփր: Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ՁՈՒԻ ԿԱՐԸ
Երեսին բնջուրիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պտտածած սեւութիւնը, մուշները, ալիս է կաշուին բնջուրիւն և սպիտակութիւն Այդ գները չափաւոր են. մեծ սրտաւը, արկղիկի մէջ, 2 րոպէի, փոքրը—1 ր. 50 կ. Մախվում են բոլոր պարֆումերական և ղեղավաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուչկինսկայա փողոց ա. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան ղեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սերանեան հրապարակ է նրա բաժանմունքում, Միջայլեան փողոց և Բազում. նաև Միջայլեան կաժուրջի վրա, Պապովի և Արևտաակովի ղեղատներում: Օտարաքաղաքացիները պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: 73—100

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ:
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկով Տրայիդոն, Յամսոն եւ Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 24 մայիսի (6 յունիսի) ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԲԻԳ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:
Ամիւր մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիբարէի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւանագնացներին համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ուսանալու համար թող բարեհաճեն զիմի ընկերութեան գործակալներին:
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԴԱՐՏԻՆ, Նարէթէմայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիճի փող. Պոլիսից: Մոսկուից: Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—կղեր. Վ. եւ Ի. Մուլաֆեաններին, Նարէթէմայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍՍԻՅՍԿ—Վաղիկաւակի երկաթուղու ստեւորական գործակալութիւն (և. հ. շ.) 21—20

ԻՆՉՈՒ ԱՄԵՆ ՄԱՐԿԻ ՊԵՏԻ ԵՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏԱՅ
ՊԵՏԻՍԻՍԻՆ ԵՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏԱՅ
„ՆԻԻ-ԵՕՐԿ“
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՊԿՀՈՎԱԳՐՎԵՐՈՒՆ

ՈՐՈՎՀԵՏԵՆ նա ամենախոշոր և ամենահաստատուն ընկերութիւններից մէկն է աշխարհի մէջ:
ՈՐՈՎՀԵՏԵՆ նրա սկիզբը 416,773,000 ր. աւելի է:
ՈՐՈՎՀԵՏԵՆ ընկերութիւնը զուտ փոխադարձ ընկերութիւն է և իր բոլոր գրամատուցներն ու ապրանքները կազմում են բացառապէս ապահովագրողների սեփականութիւնը:
ՈՐՈՎՀԵՏԵՆ ընկերութիւնը ունի 52 տարվա պատասխանատուութիւնը, որոնց ընթացքում նրա ֆինանսական ուժն ու աջողութիւնը անել է հետզհետէ:
ՈՐՈՎՀԵՏԵՆ ապահովագրողներն ամեն տարվա արդիւնքներն մասնակցում են ապահովագրողի և իւր առաջին իսկ տարիներից:
ՈՐՈՎՀԵՏԵՆ նրա պոլիսներն ԱՆՎՅԱԼԻ են. կթէ միայն պրեմիան կը վճարվի ճշգրիտ, ընկերութեան ստանց օր և է վճել և յապտման կը վճարի, մահվան դեպքում, ապահովագրված գումարը եւ, այսպիսով, ապահովագրողը կատարելապէս վտանգ է, որ ալիքն ու երեկոները կամ ժառանգները կը ժառանգեն գրամատուցի եւ ոչ թէ դատ:
ՈՐՈՎՀԵՏԵՆ իր պոլիսը 3 տարուց իտող դառնում է բացառականապէս ԱՆՎՅԱԼԻ ՊԵՏԻՍԻՆԻ վճարումը զուտապէս ղեկավար, այնու ամենայնիւ, ապահովագրված կը մնայ սկզբնական գումարը լրիւ, որոշ տարիների ընթացքում, առանց որ և է ծախսերի, կամ ապահովագրողը կարող է աստուայ լրիւ վճարել պոլիսը պակաս գնով, սկզբնական պոլիսի պայմաններով, կամ, վերջապէս, նա կարող է առանց դրամով ստանալ պոլիսի լու գնման արժէքը:
ՈՐՈՎՀԵՏԵՆ կթէ պոլիսը իր ուժը կը պահպանի ոչ պակաս քան 3 տարի ապահովագրողը կարող է ընկերութիւնից ստանալ պոլիսի:

Գլխաւոր վարչութիւնը Ռուսաստանի համար՝ С. Петербургъ, Малая Морская, 12,
Գլխաւոր լիազօրը Ռուսաստանի համար **Գ. Գ. ՄԵԼԼԷՐ**
Ինքնամուշը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Գոյոլիսիկի պրոսպեկտ, Արաֆիւրանի նոր տուն (կաղնեաների խրպուտի հանդէպ): 8—12

ՄԱՆԿԱՐԱՂՁՈՒՅԻ ՄԱՍՍԱԺԻՍԿԱ
ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՒՆԻ
ՀՈԳԱՐԱՂՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնելու, որ ներկայ տարվա մայիսի 21-ին, կատարվելու է զարդի տարեկան հանդէսը եւ գրա հետ միասին զարդի գոյութեան 75-ամեայ յօրեկանը:

1847 թուին հիմնած Ս. Պետերբուրգի
„Ն Ա Դ Ե Տ Դ Ա“

Ընկերութեան վարչութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, թէ ընտրե՞ց ընկերութիւնը
1) Իր կարգադրութեան տակ անելով Ա. Ա. Չէվէկէ ընկերութեան բոլոր չորհանաւոր, նաւամատոյցները եւ ղեկարկողները՝ այժմ ընդարձակ նաւատորմ ունի բնուրի տեղափոխելու համար Վոլգայի ամրոշղ տարածութեան վրայ՝ սկսած Բիբիսկից մինչև Կասպից ծովի նաւանագնացները եւ գրանով ապահովեցնում է իր կիլիմաներին բնուրի արագ եւ ճիշդ տեղափոխութեամբ յիշեալ ջրային ճանապարհով:
Այս նպատակին անշուշտ հասնելու համար, ընկերութիւնը 1900 թուին նաւարկութեան սեղօնում սահմանում է կանոնաւոր նաւային հաղորդակցութիւն Բիբիսկի եւ Աստրախանով ու Կասպից ծովի նաւանագնացների մէջ: Այդ նաւային հաղորդակցութեան օրացուցակը կը հրատարակվի առանձին:
2) Ընդունում է ռուսաց պետութեան համարեա բոլոր քաղաքներում բնուրի տեղափոխելու եւրոպական եւ ահիական Ռուսաստանի, նոյնպէս եւ արաստանների զանազան տեղերը:
3) Ապահովագրում է որպէս ցամաքային եւ ջրային ճանապարհներով տեղափոխվող բնուրիները, այնպէս էլ պահեստներում գտնվողները:
4) Ընդունում է ապահովագրութիւն հրդեհից, որպէս անչարժ, նոյնպէս եւ չարժանի կայքերի:
5) Ընդունում է ապահովագրութիւն պատուով ուղարկվող արժէքաւոր իրերի:
Ընտրե՞ց ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալայիկի պրոսպեկտի վրա, 102-րորդ տան մէջ (С. Петербургъ, Адмиралтейскій проспектъ, № 112):
Շոգնաւային գործերի լրագրողները գրասենակները գտնվում են—ա) Վոլգայի չորհանաւային գործերի՝ լրագրող Ալեքսանդր Ալֆոնսովիչ Չէվէկէ՝ Կիմի-Նովորոզում, Երմի-Նարե-րեժմայա փողոցի վրա, Բուկիլնիկովի տանը, բ) Կասպից ծովի չորհանաւային գործերի՝ լրագրող Վաղիկի Գոնտամանովի վրա, Բազում, Կայսր Ալեքսանդր II-ի ծովափի վրա, Վաղիկից ընկերութեան սեփական տան մէջ: Թիֆլիսի պահեստային գտնվում է Գիօրովի փողոցի վրա, վրայ ագնուականութեան շինութեան մէջ: 9—10